ԳՐԱԲԱՐԻ ՍԿԶԲՆԱՏԻՊ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻՑ ՍԵՐՎԱԾ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Գ. Կ.

Հայ լեզվաբանության մեջ արժույթի հարցերով սկսել են զբաղվել անցյալ դարավերջին՝ հիմնականում ուսումնասիրելով ժամանակակից հայերենի լեզվական նյութը[1]: Մասնավորապես գաբարի ներգործական բայերից սերված պատճառականների արժույթի դրսևորումներն առ այսօր ուսումնասիրված չեն: Անդրադառնանք գրաբարի պատճառական բայերի արժույթի դրսևորումներից մեկի՝ խնդրառական արժույթի ուսումնասիրությանը:

Սկզբնատիպ ներգործականներից սերված պատճառականները գրաբարում մեծ թիվ չեն կազմում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ սկզբնատիպ ներգործականները և սրանցից սերված պատճառականների մեծ մասը բառային համանիշներ են: Սկզբնատիպ ներգործականներից սերված պատճառականները խնդրառության տեսանկյունից լինում են միարժույթ, երկարժույթ և եռարժույթ:

Գրաբարի պատճառական բայերը սերվում են խնդրառական արժույթով տարբեր ներգործական բայերից: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

Ա. գրաբարում պատճառական բայեր են առաջացել խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ ներգործական սեռի բայերից: Ընդ որում, խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ ներգործականներից սերված պատճառականների մի մասը խնդրառությամբ մնում է միարժույթ, մյուս մասը ձեռք է բերում խնդրառական արժույթի ևս մեկ դրսևորում՝ դառնալով երկարժույթ:

Ա. 1. *Խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ ներգործական բայերից սերված խնդրառությամբ միարժույթ պատճառականներ:* Խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ ներգործականներն ու սրանցից սերված միարժույթ պատճառականները բառային համանիշներ են. երկուսն էլ պարտադիր կերպով ենթադրում և պահանջում են միևնույն սեռի խնդիրը՝ արտահայտված հայցական հոլովով: Սրանք կազմվում են միևնույն բայարմատի մասնակցությամբ՝ միմյանցից տարբերվելով այն բանով, որ սկզբնատիպ ներգործականները կազմությամբ պարզ, այսինքն՝ աննշանակիր են, մինչդեռ պատճառականները՝

[1] Տե՛ս մասնավորապես ***Ջահուկյան Գ. Բ.***, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1976, էջ 446-466:

ածանցավոր, այսինքն՝ նշանակիր: Թեև ՆԲՀԼ-ում այս տիպի միարժույթ մի շարք պատճառականներ ներկայացված են իբրև առանձին բառահոդվածներ, սակայն դրանք իմաստային դաշտում չեն տարբերվում իրենց սկզբնատիպ ներգործականներից: Հմմտ. *ախորժել/ախորժացուցանել, ամանալ/ամացուցանել, առագաստել/առագաստացուցանել, զգուել/զգուեցուցանել, ըստանձնել/ըստանձնեցուցանել, հոտոտել/հոտոտեցուցանել, շօղել/շօղեցուցանել, նկարել/նկարեցուցանել, նշմարել/նշմարեցուցանել, վախճանել/վախճանեցուցանել, փառաւորել/փառաւորեցուցանել* և այլն, որոնցից վերջինս, օրինակ, արտահայտում է միևնույն իմաստը («փառաւոր կացուցանել»), ինչ որ *փառաւորել* սկզբնատիպ ներգործականը: Հմմտ. Որդի *փառաւորէ զհայր* (ՆԲՀԼ)[2] և Աստուած *փառաւորեցոյց զողորմութիւն* (Գ Մակ., Զ, 28): ՆԲՀԼ-ում բերված են նաև այնպիսի միարժույթ պատճառականներ, որոնք, ճիշտ է, դիտվում են առանձին բառահոդվածներ, սակայն կրում են «նոյն ընդ վ.» նշումը՝ նկատի առնելով նրանցից առաջ տեղ գտած սկզբնատիպ ներգործականներն ու վերջիններիս արտահայտած իմաստները: Այդ պատճառականներից են՝ *գրգեցուցանել, ընկրկեցուցանել, կերպաւորեցուցանել, հանգրիմեցուցանել (*«սեղմել տալ»*), ճոճեցուցանել, շարժեցուցանել, ողորկեցուցանել, վտանգեցուցանել, գալարեցուցանել, զեղծուցանել, երգիծուցանել/երգիծեցուցանել, դղ/ռ/ղեցուցանել, այրեցուցանել* և այլն: Օրինակ՝ *այրեցուցանել զբոյսն* (Ագաթ., 276), *դղ/ռ/ղեցուցանել զբանակ* (Դատ., Ը, 12), *գալարեցուցանել զաղիս* (ՆԲՀԼ), *զեղծուցանել զմարդն* (Եզնիկ, 257), *երգիծուցանել զձեզ* (Մատթ., Է, 6), *ճոճեցուցանել զտունն* (ՆԲՀԼ), *շարժեցուցանել զինքն* (ՆԲՀԼ), *ողորկեցուցանել զմարմին* (ՆԲՀԼ) և այլն:

Մեկ այլ խումբ պատճառականներ ՆԲՀԼ-ում իրենց սկզբնատիպ ներգործականների հետ բերվում են իբրև մեկ բառահոդված: Դրանցից են՝ *կծել/կծանել/կծեցուցանել, շառաւիղել/շառաւիղեցուցանել, մակտառել/մակտառեցուցանել, մատաղել/մատաղեցուցանել, քացախել/քացախեցուցանել* («ապականել տալ»), *եռանդել/եռանդնացուցանել, ճայրոտել/ճայրոտեցուցանել, մորմոքել/մորմոքեցուցանել*[3], *ընդարձակել/ընդարձակեցուցանել*[4], *փոսեմ/փոսացուցանել* և այլն: Օրինակ՝ *կծել/կծանել/կծեցուցանել զունկն* (ՆԲՀԼ), *մակտառել/մակտառեցուցանել*

---

[2] Լեզվական նյութի մի մասը քաղել ենք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836-1837) երկհատորյակի համապատասխան բառահոդվածներից՝ ՆԲՀԼ հղումով:

[3] Համանիշ են նաև արդի հայերենի ***մորմոքեցնել*** և ***մորմոքել*** բայերը (տե՛ս ***Աղայան Էդ.***, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Դ-Ֆ, Ե., 1976, էջ 1029):

[4] Հմմտ. նաև ***Ընդարձակելով ընդարձակեսցես նմա զձեռն քո/զձեռն քո յեղբայր քո*** (Բ Օրէն., ԺԵ, 8):

զքեզ (ՆԲՀԼ), *մատաղել/մատաղեցուցանել զփարաւոն* (ՆԲՀԼ), *քացախել/քացախեցուցանել* («ապականել տալ») *զառաքինութիւն* (ՆԲՀԼ), *եռանդել/եռանդնացուցանել զնոսա* (ՆԲՀԼ), *ճայրոտել զտեսանելիս* (ՆԲՀԼ) և *ճայրոտեցուցանել զտկարս* (ՆԲՀԼ): Հմմտ. նաև *մորմոքել զհոգիս* (ՆԲՀԼ) և *մորմոքեցուցանել զբազումս* (ՆԲՀԼ), *ընդարձակել զսահմանս* (Ել., ԼԴ, 24) և *ընդարձակեցուցանել զբնակութիւն* (ՆԲՀԼ), *փոսեմ զտեղիս* (Ագաթ., 397) և *փոսացուցանել վիհս* (Ագաթ., 24) և այլն:

Գրաբարի միարժույթ պատճառական բայերի մի խումբ էլ սերվում է այնպիսի բայերից, որոնք միաժամանակ ունեն և՛ ներգործական, և՛ հասարակ բայերին հատուկ կիրառություն: Կարծում ենք, որ այս խմբի պատճառականները սկզբնատիպ ներգործականներին զուգահեռ կազմվել են հասարակ բայերի հենքի վրա՝ ներգործական սեռի քերականական իմաստը առանձին և ոչ թե հասարակաբար, այսինքն՝ դիմաթվային ընդհանուր վերջավորությունների միջոցով արտահայտելու նպատակով: Դրանցից են՝ *ախորժեցուցանել, ամանեցուցանել, բոկացուցանել, շահեցուցանել, ծնուցանել* և այլն: Օրինակ՝ *ծնուցանել հուր* (Եզնիկ, 220) և այլն:

Միարժույթ պատճառականների երրորդ խումբն էլ սերվում է այնպիսի բայերից, որոնք ելակետային վիճակում կրկնասեռ են. ունեն և՛ չեզոք, և՛ ներգործական սեռերի քերականական իմաստների արտահայտության հնարավորություն: Կարծում ենք, որ աննշանակիր պատճառականների հետ զուգահեռաբար առկա այս խմբի պատճառականները կազմվել են՝ թարգմանվող երկին հարազատ մնալու կամ այլ անհրաժեշտությամբ պայմանավորված: Այդ բայերից են՝ *ստացուցանել* («ի սուտ հանել»), *վախճանեցուցանել, կքեցուցանել, ողբացուցանել, երկրպագեցուցանել* և այլն: Օրինակ՝ *ստացուցանել զգործս* (ՆԲՀԼ), *կքեցուցանել զոտսն* (ՆԲՀԼ), *ողբացուցանել զքարացեալսն* (ՆԲՀԼ), *երկրպագեցուցանել զնա* (ՆԲՀԼ) և այլն:

Ներգործականներից սերված խնդրառությամբ միարժույթ մի շարք պատճառականներ, միաժամանակ, աչքի են ընկնում պարտադիր պարագաառությամբ. սեռի խնդրից բացի՝ ենթադրում և պահանջում են տեղի պարագա, որի առկայությունն, անշուշտ, անմիջականորեն պայմանավորված է այդ բայերի բառիմաստով: Դրանցից են՝ *դասեցուցանել, զեղուցանել, ընկլուզանել, հոսեցուցանել, յածեցուցանել, ամացուցանել* և այլն: Օրինակ՝ *դասեցուցանել* զիս *ընդ սուրբս* քո *(*ՆԲՀԼ*), զեղուցանել* զողորմութիւն *ի վերայ նոցա* (Սիր., ԺԸ, 9), *ընկլուզանել* զնա *ի ծով Կարմիր* (Բ Մակ., ԺԲ, 4), *հոսեցուցանել* արտոսր *յաչաց (*ՆԲՀԼ*), յածեցուցանել* զնա *յանապատին* (Թիւ., ԼԲ, 13), *ամացուցանել* զնա *ի խորսն (*ՆԲՀԼ*)*:

Պարագաառության այս զորությունը պատճառականները ժառանգել են իրենց սկզբնատիպ ներգործականներից, սակայն, ինչ խոսք, ասվածը բոլոր պատճառականներին չէ, որ վերաբերում է: Օրինակ՝ *յոլովել* սկզբնատիպ ներգործականը պարագաառու է (*յոլովել զկնի/առ ոտս/ի բարձուստ* և այլն), մինչդեռ նույն բանը չենք կարող ասել նրանից սերված *յոլովեցուցանել* պատճառականի մասին[5]:

Ա. 2. *Խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ ներգործական բայերից սերված խնդրառությամբ երկարժույթ պատճառականներ*: Գրաբարում կան խնդրառությամբ երկարժույթ պատճառական բայեր, որոնք սերվում են պարտադիր սեռի խնդիր առնող միարժույթ սկզբնատիպ ներգործականներից՝ ձեռք բերելով ևս մեկ (այս դեպքում՝ բնության) խնդիր ենթադրելու և անհրաժեշտության դեպքում՝ պահանջելու ներունակություն: Բնական է, որ սրանց պահանջած սեռի խնդիրը ևս արտահայտվում է հայցական հոլովով: Ինչ վերաբերում է այս խմբի պատճառականների ենթադրած բնության խնդրին, ապա այն կարող է արտահայտված լինել՝

ա) *տրական հոլովով*, որ ենթադրում կամ պահանջում են *բարբառեցուցանել, խօսեցուցանել*[6], *զգեցուցանել, ժառանգեցուցանել, լուուցանել, լսեցուցանել*[7], *յոլովեցուցանել, շահեցուցանել* («հարմարեցնել»), *ճշգրտեցուցանել (*այստեղ՝ «նմանեցնել»), *յիշեցուցանել, մշակեցուցանել* («ծառայեցնել»), *մոռացուցանել, արբուցանել, ճաշակեցուցանել, ճարակեցուցանել, որոճեցուցանել, պատկերացուցանել, վիճակեցուցանել, յաղթեցուցանել, երեւակայացուցանել, պատրաստեցուցանել* և այլն: Օրինակ՝ *բարբառեցուցանել ինձ ըզբարին (*ՆԲՀԼ*), զգեցուցանել թուխս աշխարհին իւրում (*Եզնիկ, 248*), ժառանգեցուցանել ձեզ զերկիրն (*Թիւ., ԺԳ, 17*), լուուցանել ինձ զձայն (*Երգ., Բ, 14*), յոլովեցուցանել նմա զբառ (*ՆԲՀԼ*), շահեցուցանել քեզ ճայթմունս (*ՆԲՀԼ*), ճշգրտեցուցանել զնա անասնոյ (*ՆԲՀԼ*), յիշեցուցանել նոցա զմարտ պատերազմի*[8] *(*Բ Մակ., ԺԵ, 9*), մշակեցուցանել զնա*

---

[5] Ներգործականներից սերված բազմաթիվ միարժույթ պատճառականներ, ուղիղ իմաստից բացի, կիրառվում են նաև փոխաբերական իմաստով: Դրանցից են՝ ***ճառագայթեցուցանել, քացախեցուցանել, վառեցուցանել, խայտառակեցուցանել*** և այլն: Օրինակ՝ ***ճառագայթեցուցանել զմիտս (***ՆԲՀԼ***), քացախեցուցանել զառաքինութիւնն (***ՆԲՀԼ***), վառեցուցանել զսէրն (***ՆԲՀԼ***), խայտառակեցուցանել զխորհուրդս (***ՆԲՀԼ***)*** և այլն: Հոդվածում քննության ենք առնում միայն ուղիղ իմաստներով պայմանավորված արժույթի դրսևորումները:

[6] Բայս ՆԲՀԼ- ում վկայվում է միակ անգամ՝ ***Խօսեցոյց*** զհամերս, որտեղ պարզ երևում է, որ այն չի կարող պահանջել ասացական բայերին հատուկ բնության խնդիր, բանն այն է, որ այստեղ ***խօսեցուցանել***-ը գործածվել է «խոսելու հնարավորություն, ունակություն ընձեռել» իմաստով:

[7] Ստուգաբանորեն համարմատ և միաժամանակ համանիշ է ***լուուցանել***-ին:

[8] Սեռականով հավելադրությունը գրաբարի ոճական հնարանքներից մեկն է, որից բայի արժույթը փոփոխության չի ենթարկվում:

այգւոյն (ՆԲՀԼ), *մոռացուցանել նոցա զսովորութիւն* (Ագաթ., 161), *արբուցանել, ճաշակեցուցանել ինձ ի շիկաթանէ* (ՆԲՀԼ)[9], *ճարակե-ցուցանել/որոճեցուցանել մեզ զարօտ* (ՆԲՀԼ), *պատկերացուցանել ինձ զգալուստ* (ՆԲՀԼ), *վիճակեցուցանել զլաւն իւրեանց* (ՆԲՀԼ), *յաղթեցուցանել զբնութիւն չարչարանաց* (ՆԲՀԼ) և այլն[10]:

բ) *Բացառական հոլովով*: Հատկանշական է, որ այս շարքի պատճառականները երկարժույթ են շնորհիվ իրենց փոխաբերական իմաստների: Օրինակ՝ *զրաւեցուցանել* («կատարել», «ավարտի հասցնել») բայը երկարժույթ է «ազատել» իմաստով [*զրաւեցուցանել զնռսա յուխտէ* (ՆԲՀԼ)]:

գ) *Գործիական հոլովով*, որ կարող են պահանջել *կարկեցուցանել*[11], *ճարակեցուցանել, ճաշակեցուցանել, արբուցանել* և նման տիպի իմաստներ արտահայտող բայեր, որոնք տրականով բնության խնդրի փոխարեն կարող են առնել գործիականով խնդիր: Օրինակ՝ *արբուցանել ջուրբ զանդս* (ՆԲՀԼ): Հմմտ. նաև *ճարակեցուցանել զնա խոտով* և *նմա խոտ*, *ճաշակեցուցանել ինձ շիկաթան* և *զիս շիկաթանիւ*, *արբուցանել նմա գինի* և *զնա գինւով* և այլն[12]:

Բ. Գրաբարում պատճառական բայեր են սերվել նաև խնդրառությամբ երկարժույթ սկզբնատիպ ներգործական բայերից: Նկատելի է, որ խնդրառությամբ երկարժույթ սկզբնատիպ ներգործականներից սերված պատճառականների մի մասը խնդրառությամբ մնում է երկարժույթ, մյուս մասը ձեռք է բերում խնդրառական արժույթի ևս մեկ դրսևորում՝ դառնալով եռարժույթ:

Բ. 1. *Խնդրառությամբ երկարժույթ սկզբնատիպ ներգործական բայերից սերված խնդրառությամբ երկարժույթ պատճառականներ*: Գրաբարում առավել մեծ թիվ են կազմում այն երկարժույթ պատճառականները, որոնք սերվում են իրենց աննշանակիր ներգործականներից: Կարծում ենք, որ այսպիսի պատճառականները պետք է առաջացած լինեն՝ պայմանավորված թարգմանվող երկի լեզվին և բառաստեղծման միջոցներին հարազատ մնալու հանգամանքներով:

Իրենց սկզբնատիպ ներգործականների նման այս պատճառականները ևս զորություն ունեն առնելու մի սեռի և մի բնության խնդիր: Վերջինս կառավարվում

---

[9] Բայս սեռի խնդիր է առել ոչ թե հայցական հոլովով, այլ վերջինիս քերականական իմաստը մասնականորեն արտահայտող տարբերակով՝ բացառականով:

[10] Այս շարքի ***թողացուցանել*** պատճառականը, լինելով բազմիմաստ բայ, ի զորու է հայցականով սեռի խնդրի փոխարեն պահանջելու բացարձակ անորոշով արտահայտված խնդիր՝ վերջինիս համար կատարելով եղանակավորիչ բայի գործառույթ: Հմմտ. ***թողացուցանել ումեք գործել*** (ՆԲՀԼ) և ***թողացուցանել ինձ զամիսս*** (Դատ., ԺԱ, 37) և այլն:

[11] Բայս կարող է պահանջել նաև բացառականով բնության խնդիր, ինչպես՝ կարկեցուցանել («պապանձեցնել») զհեթանոսսն ***յառասպելաց*** (ՆԲՀԼ):

[12] Հմմտ. ***Տու՛ր ինձ ճաշակել ի շիկաթանէդ յայդմանէ*** (Ծնն., ԻԵ, 30), որտեղ նույն իմաստն արտահայտվում է ոչ թե համադրական, այլ վերլուծական պատճառական բայով:

է՝ կախված տվյալ պատճառականի բառիմաստից և կարող է արտահայտված լինել՝

ա) *տրական հոլովով*, որ ենթադրում կամ պահանջում են այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ *ագուցանել, ազդեցուցանել*[13], *բախեցուցանել, բաջաղեցուցանել, իմացուցանել, խոստացուցանել* (*«*խոստովանեցնել*»), ծանուցանել, հաղորդեցուցանել, հնազանդեցուցանել*[14]*, ջամբեցուցանել, սեպհականացուցանել, վկայեցուցանել, բանդագուշեցուցանել, զգացուցանել, յարմարեցուցանել, յանձնեցուցանել* և այլն: Օրինակ՝ *ագուցանել նոցա*[15] *կօշիկս* (Բ Մնաց., ԻԸ, 15*), ազդեցուցանել արքային զտրտունջ* (Եղիշէ, 142 և ՆԲՀԼ), *բաջաղեցուցանել նմա զմեծամեծս* (ՆԲՀԼ*), իմացուցանել դոցա զհրաման* (Ել., ԺԸ, 16*), խոստացուցանել զգաղտնիս նմա, ծանուցանել զերկինս նմա* (Եղիշէ, 35*), հաղորդեցուցանել զքեզ այսոցիկ* (ՆԲՀԼ*), հնազանդեցուցանել զոմն լճոյն* (ՆԲՀԼ*), ջամբեցուցանել զայս ձեզ* (ՆԲՀԼ*), սեպհականացուցանել զազգսն իւր* (ՆԲՀԼ*), վկայեցուցանել զինչ ցաւս ինձ* (ՆԲՀԼ*), վկայեցուցանել զվկայութիւն*[16] (ՆԲՀԼ) *բանդագուշեցուցանել զքեզ երկիւղից* (ՆԲՀԼ*), զգացուցանել զայս ինձ* (Գործ., ԻԳ, 22*), յարմարեցուցանել դեղ մեզ* (ՆԲՀԼ*), յանձնեցուցանել զիս նմա* (ՆԲՀԼ*)* և այլն:

Նշված ասացական և մի շարք այլ պատճառականներ, տրականով բնության խնդրից բացի, սեռի խնդրի փոխարեն կարող են առնել նախդրավոր կապակցությամբ արտահայտված մի բնության խնդիր, որը, փաստորեն, սեռի խնդրի փոփոխակն է: Հմմտ. *զգացուցանել նմա*՝ ա) *զՊօղոսէ* (Գործ., ԻԵ, 2), բ) *վասն Պօղոսի* (Գործ., ԻԳ, 1) և գ) *զայս ինձ* (Գործ., ԻԳ, 22); *յիշեցուցանել ձեզ*՝ ա) *վասն շնորհացն* (Հռովմ., ԺԵ, 15) և բ) *զամենայն* (Յովհ., ԺԴ, 26); *զեկուցանել արքայի*՝ ա) *զՊօղոսէ* (Գործ., ԻԷ, 14) և բ) *զմիտս* (ՆԲՀԼ) և այլն:

Այս շարքի բայերից մի քանիսը գործածվել են ոչ միայն ուղիղ, այլ նաև փոխաբերական իմաստով: Օրինակ՝ *զգեցուցանել հանճար ինձ* (ՆԲՀԼ), *ծաղկեցուցանել մեզ զկենդանութիւն* (ՆԲՀԼ), *ստացուցանել զհանճարս նմա* (ՆԲՀԼ) և այլն:

բ) *Հայցական հոլովով*, որը բուն սեռի խնդրի համեմատությամբ երկրորդ աստիճան է ներկայացնում թե՛ պարտադիր և թե՛ ուժեղ խընդրառության

---

[13] Հմմտ. ազդեցուցանել վասն նորա արքային:

[14] Բայս տրականով բնության խնդրի փոխարեն կարող է պահանջել նաև նախդրավոր կապակցությամբ բնության խնդիր, ինչպես՝ հնազանդեցուցանել զտիեզերս ***ընդ ձեռամբ*** (Խոր., 28):

[15] Բայս տրականով բնության խնդրի փոխարեն կարող է պահանջել նաև նախդրավոր կապակցությամբ պարագա (***ի բազուկս*** զուլենիս):

[16] Ներգործական սեռի բայերի՝ համարմատ (ներքին) ուղիղ խնդիր առնելու զորությունը գրաբարում կիրառվում էր որպես ոճական հնարանք:

տեսանկյունից, քանի որ առաջանում է «բուն ուղիղ խնդրի հետևանքով»[17]: Հարկ է նշել, որ ներգործական սկզբնատիպ բայերից սերված պատճառականների մեջ միայն *ուսուցանել* բայն է, որը թեև զորություն ունի պահանջելու հայցական հոլովով կրկնակի (բուն և երկրորդական) խնդիրներ, սակայն այդ հատկությունը պայմանավորված է ոչ թե *ուսուցանել*-ի իմաստով, այլ հունաբանության իրողություններից մեկն է: Գրաբարում այդ բայը երկարժույթ է, բայց, սեռի խնդրից բացի, սովորաբար առնում է ոչ թե հայցականով, այլ տրականով կամ նախդրավոր կապակցությամբ արտահայտված մի բնության խնդիր: Հմմտ. *ուսուցանել* առ հասարակ *զբնաւս զարս և զկանայս զուսմունս* մոգուցըն (Փարպ., 54) և *ուսուցանել քեզ զիմաստութիւն* (Յովբ, ԼԳ, 33)[18]:

Այս շարքում տեղ են գտնում նաև այնպիսի պատճառականներ, որոնք, բուն սեռի խնդրից բացի, զորություն ունեն առնելու մի երկրորդ խնդիր՝ արտահայտված ոչ թե որևէ հոլովաձևով, այլ անորոշ դերբայի բացարձակ տարբերակով: Խոսքը վերաբերում է սկզբնատիպ ներգործականներից սերված մի քանի պատճառականների: Վերջիններս, թեև ինչ-որ չափով եղանակավորում են իրենց պահանջած անորոշ դերբայի գործողությունը (բանն այն է, որ այս պատճառականները սերվում են եղանակավորիչ գործառույթ կատարող ներգործականներից), սակայն, այնուամենայնիվ, պահպանում են իրենց բուն իմաստը (լիիմաստ են): Դրանցից են՝ *ջանացուցանել, կամեցուցանել, յորդորեցուցանել, հաւանեցուցանել, դրդեցուցանել, ճեպեցուցանել, թախանձեցուցանել* («ստիպել տալ»), *հարկեցուցանել, անզգամեցուցանել* և այլն: Օրինակ՝ *ջանացուցանել զնա ընթանալ (*ԽԲՀԼ*), կամեցուցանել զնոսա բարբառել (*Խոր., 362*), յորդորեցուցանել զքերթողն քերթել (*ԽԲՀԼ*), հաւանեցուցանել զքեզ խոնարհ լինել (*ԽԲՀԼ*), դրդեցուցանել զԴաւիթ թուել (*Ա Մնաց., ԻԱ, 1*), ճեպեցուցանել զնոսա շինել զեկեղեցի (*ԽԲՀԼ*), թախանձեցուցանել զիս քահանայանալ (*ԽԲՀԼ*), հարկեցուցանել զնա կամակցել (*ԽԲՀԼ*), անզգամեցուցանել զնա առնել առաւել (*Բ Մակ., ԺԳ, 6*) և այլն:

գ) *Բացառական հոլովով*, որպիսիք պահանջում են այնպիսի պատճառականներ, ինչպիսիք են՝ *ազատեցուցանել, անխայեցուցանել, անուշացուցանել, անջատեցուցանել, ապաքինեցուցանել, բթա/եցուցանել, գթեցուցանել, դրդուեցուցանել (*«խոտորել տալ»*), խափանեցուցանել, կազդուրեցուցանել, կասեցուցանել, զկծեցուցանել, կործանեցուցանել, ճգնեցուցանել, մերժեցուցանել,*

---

[17] Տե՛ս ***Առաքելյան Վ.Դ.***, Հայերենի շարահյուսություն, հ.Ա, Ե., 1958, էջ 290:

[18] 19 Հմմտ. նաև ուսուցանել զձեզ ***առնել*** այնպէս (Բ Օրէն., Զ, 1)և ուսուցանել զձեռս ***ի պատերազմ***(Սաղմ., ԺԷ, 35):

հոլանեցուցանել, մերկացուցանել, յապաղեցուցանել, յստակեցուցանել, պակասեցուցանել, պահանջեցուցանել, պատկառելացուցանել, վայրատեցուցանել, տպաւորեցուցանել, փարատեցուցանել և այլն: Օրինակ՝ *ազատեցուցանել նախաստեղծն ի ծառայութենէ (ՆԲՀԼ), անխայեցուցանել զմեզ ի կարծեաց (ՆԲՀԼ), անուշացուցանել զոգիս ի մաղաց (ՆԲՀԼ), անջատեցուցանել զանձն յորդւոյն (ՆԲՀԼ), ապաքինեցուցանել զբնութիւնն ի ցաւոց (ՆԲՀԼ), բթացուցանել զհոգիս ի շնորհաց (ՆԲՀԼ), զթեցուցանել զնոսա ի ճանապարհէ (ՆԲՀԼ), դրդուեցուցանել զբազումս յուխտէն (*Եղիշէ, 7*), խափանեցուցանել զնոսա յրմպելեաց (ՆԲՀԼ), կազդուրեցուցանել զոք ի կականմանց (ՆԲՀԼ), կասեցուցանել զոք ի սիրոյն (ՆԲՀԼ), զկծեցուցանել զձեռն յեղբօրէ (ՆԲՀԼ), կործանեցուցանել զոք ի պատուոյ (ՆԲՀԼ), ճգնեցուցանել զկէսսն ի քաղցոյ (ՆԲՀԼ), մերժեցուցանել զնա ի սիրոյ (ՆԲՀԼ), հոլանեցուցանել զայլսն ի զգեստուց (ՆԲՀԼ), մերկացուցանել զհանդերձս յԱհարոնէ (*Թիւ., Ի, 26*), յապաղեցուցանել զնա ի պահելոյ (ՆԲՀԼ), յստակեցուցանել զմիտս ի նանիր խորհրդոց (ՆԲՀԼ), պահանջեցուցանել զնոսա ի թշնամեաց (ՆԲՀԼ), պակասեցուցանել զսա ի միջոյ (*Բուզ., 13*) պատկառելացուցանել զնոսա ի միմեանց (ՆԲՀԼ), վայրատեցուցանել զիս ի միածնէդ (ՆԲՀԼ), տպաւորեցուցանել զկինն ի կողէ (ՆԲՀԼ), փարատեցուցանել զերկիր ի ջուրց (*Ագաթ., 205*)* և այլն:

Այս շարքի որոշ պատճառականներ պահանջում են պարագայական խնդիր: Դրանցից են՝ *վիժեցուցանել, վայրատեցուցանել, տապալեցուցանել, աստանդեցուցանել, արտաքսեցուցանել* և այլն: Օրինակ՝ *վայրատեցուցանել զնոսա ի դրախտէ (ՆԲՀԼ), տապալեցուցանել զվէմն ի բերանոյ ջրհորոյն (Ծնն.դ., ԻԹ, 10), աստանդեցուցանել զուշն ի յիշատակաց (ՆԲՀԼ), արտաքսեցուցանել զմեզ ի կենաց (ՆԲՀԼ)* և այլն:

դ) *Գործիական հոլովով*, որպիսիք պահանջում են *զարդարեցուցանել, զգեստաւորեցուցանել, խփուցանել, լուսաւորեցուցանել, լցուցանել, ծիւրեցուցանել, հրապուրեցուցանել, ճնշեցուցանել, փորձեցուցանել, քաջալերեցուցանել, օգտա/եցուցանել* և այլ բայեր: Օրինակ՝ *զարդարեցուցանել զհարսունս պաճուճանօք (ՆԲՀԼ), զգեստաւորեցուցանել զերիցունս հանդերձիւք (ՆԲՀԼ), խտրտեցուցանել զմտածութիւնս և զմարմինս խորհրդով* (ՆԲՀԼ), *լուսաւորեցուցանել զիսաւար լուսով (ՆԲՀԼ), լցուցանել զամենեսեան պարգեւօք (ՆԲՀԼ), ծիւրեցուցանել զմարմին ախտիւ (ՆԲՀԼ), հրապուրեցուցանել զոմանս տեսլեամբ (ՆԲՀԼ), ճնշեցուցանել զմարմին պահօք (ՆԲՀԼ)* և այլն:

Գրաբարում կան մի շարք պատճառական բայեր էլ, որոնք, ճիշտ է, պահանջում են նաև գործիականով բնության խնդիր, սակայն խնդրառության տվյալ դրսևորումը չի բխում այդ բայերի բուն բառիմաստից և, բնականաբար, չի կարող դիտվել որպես պարտադիր և ուժեղ կառավարման արտահայտություն: Օրինակ՝ *բուրա/եցուցանել, կուտակեցուցանել, խռովեցուցանել, վրդովեցուցանել,*

տոչորեցուցանել, *վարժեցուցանել* և այլ բայերի կողմից ոչ բոլոր խոսքային իրադրությունների մեջ է ենթադրվում գործիականով բնության խնդիր, ինչպես՝ *բուրեցուցանել* զխունկն *որով* (ՆԲՀԼ), *կուտակեցուցանել* զմարդիկ *խօսիւք* (ՆԲՀԼ), *խռովեցուցանել* զնոսա *սրտմտութեամբ* (Սաղմ., Բ, 5), *վրդովեցուցանել* զնա *իւիք* (ՆԲՀԼ), *տոչորեցուցանել* զիս *հրով* (ՆԲՀԼ), *վարժեցուցանել* զնա *շնորհիւք* (ՆԲՀԼ) և այլն:

ե) *Նախդրավոր կապակցություններով*, որտեղ կապվող բառաձևերի հետ առավել հաճախ կիրառվում է *ի* կամ *յ* նախդիրը: Նախդրավոր կապակցություն պահանջող պատճառական բայերից են՝ *աղաւաղեցուցանել, երդմնեցուցանել, զետեղեցուցանել զարդարն, զինուորեցուցանել, ընկղմեցուցանել, թնդա/եցուցանել, ծաւալեցուցանել, ճմլեցուցանել, միաւորեցուցանել, մօտեցուցանել, յարեցուցանել, յիրեցուցանել (*«կցել», «կարկառել»*), յօդա/եցուցանել, նշողացուցանել, շթքե-ցուցանել (*«ցայտեցնել», «ցնդեցնել»*), պատսպարեցուցանել, պարսպե-ցուցանել, վարձկանեցուցանել, վստահացուցանել, ցօղացուցանել, փոխանա-կեցուցանել* և այլն: Օրինակ՝ *աղաւաղեցուցանել* զփրկութիւն *ընդ կորստեան (*ՆԲՀԼ*), զինուորեցուցանել* զնա *ի հոգեւոր իշխանութիւն (*ՆԲՀԼ*), թնդա/եցուցանել* զսիրտ *ի բարկութիւն (*ՆԲՀԼ*), ծաւալեցուցանել* զճառագայթսն *յերկիր (*ՆԲՀԼ*), ճմլեցուցանել* զսաստն *ի զիջումն (*ՆԲՀԼ*), միաւորեցուցանել մարմին ի բանն (*ՆԲՀԼ*), մօտեցուցանել* զանմիտն *ի մեզ (*Փարպ., 161 և ՆԲՀԼ*), յարեցուցանել* զնա *յինքն (*Ագաթ., 450*), յիրեցուցանել* զձեռն *ընդ ծակ (*ՆԲՀԼ*), պարսպեցուցանել* զքեզ *ի մեզ (*ՆԲՀԼ*), վստահացուցանել* զմեզ *ի յոյսս (*ՆԲՀԼ*), ցօղացուցանել* զցանկութիւնս *առ լաւագոյնսն (*ՆԲՀԼ*)* և այլն:

Այս շարքի որոշ բայեր (*հպեցուցանել*, *ճակատեցուցանել*, *զարկուցանել* և այլն) զորություն ունեն պահանջելու տարբեր նախդրավոր կապակցություններով արտահայտված բնության խնդիրներ, ինչպես՝ *հպեցուցանել* ՝ զոք ա) *ի դուռն* (ՆԲՀԼ), բ) *յԱստուած* (ՆԲՀԼ) և գ) *առ այսոսիկ* (ՆԲՀԼ), *ճակատեցուցանել* զնոսա՝ ա) *ընդդէմ ասորւոց* (Բ Թագ., Ժ, 9) և բ) *ի մարտ պատերազմի* (Ա Մակ., Զ, 33), *զարկուցանել* զնա՝ ա) *զգետնի* (ՆԲՀԼ), բ) *առ նոյն* (ՆԲՀԼ), գ) *յերկիր* (ՆԲՀԼ) և այլն:

Բ. 2. *Խնդրառությամբ երկարժույթ սկզբնատիպ ներգործական բայերից սերված խնդրառությամբ եռարժույթ պատճառականներ*[19]*:* Այս խմբի բայերը նույնպես, ինչպես սկզբնատիպ չեզոքներից սերված եռարժույթ պատճա-ռականները, գրաբարում չափազանց փոքր թիվ են կազմում: Հարկ է նկատել, որ այս բայերի արժույթի երրորդ եզրը խոսքային բոլոր իրավիճակներում չէ, որ

[19] Այս շարքում քննության ենք առնում նաև խնդրառությամբ եռարժույթ սկզբնատիպ ներգործականներից սերված եռարժույթ պատճառականները, որոնք նույնպես գրաբարում չափազանց սակավաթիվ են:

բառային արտահայտություն ունի: Գրաբարի՝ խնդրառությամբ եռարժույթ պատճառական բայերից են՝ *երդմնեցուցանել*[20], *զեկուցանել*[21], *ընծայեցուցանել, հոչակեցուցանել, պահպանեցուցանել, հատուցանել, արձակեցուցանել, կարծեցուցանել:* Օրինակ՝ *զոր երդմնեցուցանեմ զքեզ ի Տէր* (Ծնն., ԻԴ, 3), *զեկուցանել մեզ զմիտս ի ձեռն որոյ* (ՆԲՀԼ), *ընծայեցուցանել (մեզ) զառ ի նոցանէ վկայութիւն* (ՆԲՀԼ), *հոչակեցուցանել (մեզ) ամբաստանութիւն զԱթանեսէ* (ՆԲՀԼ), *պահպանեցուցանել զնոսա հրեշտակաւ ի նետից* (ՆԲՀԼ), *հատուցանել զվրէժ ի Տեառնէ Մարիամու* (Թիւ., ԼԱ, 3), *հատուցանել ինձ չար ընդ բարւոյ* (Բուզ., 140), *կարծեցուցանել զօգտակարսն նմա վնասակարս (*Եզնիկ, 46*)* և այլն:

Գրաբարի՝ սկզբնատիպ ներգործական բայերից սերված համադրական պատճառական բայերի և նրանց խնդրառական արժույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, սերվելով խնդրառությամբ տարբեր բայերից, այդ պատճառականներն աչքի են ընկնում խնդրառական արժութային տարբեր օժտվածությամբ: Խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ ներգործականներից սերված մի շարք պատճառականներ խնդրառությամբ միարժույթ են (տվյալ դեպքում առկա է բառային համանշություն): Խնդրառությամբ միարժույթ որոշ ներգործականներից առաջացել են խնդրառությամբ երկարժույթ պատճառականներ (այս դեպքում, սեռի խնդրից բացի, այդ պատճառականները պարտադիր կերպով ենթադրում են նաև մի բնության խնդիր՝ արտահայտված որևէ հոլովով կամ նախդրավոր կապակցությամբ): Խնդրառությամբ երկարժույթ սկզբնատիպ ներգործականներից սերվել են մի դեպքում երկարժույթ պատճառականներ (տվյալ դեպքում ևս առկա է բառային համանշություն), մյուս դեպքում՝ խնդրառությամբ եռարժույթ պատճառականներ: Վերջիններս գրաբարում խիստ սակավաթիվ են և գերազանցապես ենթադրում են մի սեռի և երկու բնության խնդիրներ: Հազվադեպ են այն պատճառականները, որոնք ենթադրում են երկու սեռի և մեկ բնության խնդիր: Բացառիկ են նաև խնդրառությամբ եռարժույթ ներգործականներից առաջացած խնդրառությամբ եռարժույթ պատճառականները, որոնք իրենց սկզբնատիպ ներգործականների

---

[20] Գրաբարում սովորական է ***երդմնեցուցանել*** բայի երկարժույթ կիրառությունը, ինչպես՝ ***երդմնեցուցանել*** քեզ ***վասն բանիս (***Նէեմ., Ե, 12***):***

[21] Լինելով ասացական՝ բայս զորություն ունի հայցական հոլովով սեռի խնդրի փոխարեն պահանջելու նաև նախդրավոր կապակցությամբ արտահայտված բնության խնդիր : Օրինակ՝ Այսու ***զ***թերակատար ***հաւատոյ*** զեկուցանէ (ՆԲՀԼ):

համանիշներն են և մեկը մյուսից տարբերվում են միայն կազմությամբ՝ -*ուցան*- պատճառական ածանցով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
Բուզ. - Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
Եզնիկ – Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
Եղիշէ – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:
Խոր. – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
ՆԲՀԼ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I – II, Վենետիկ, 1836-1837:
Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

ВАЛЕНТНОСТЬ ПО ДОПОЛНЕНИЯМ КАУЗАТИВНЫХ ГЛАГОЛОВ, МОТИВИРОВАННЫХ ПЕРВООБРАЗНЫМИ НЕПЕРЕХОДНЫМИ ГЛАГОЛАМИ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ХАЧАТРЯН Г. К.

Резюме

Из первообразных переходных глаголов грабара образовались и одновалентные, и двувалентные, и трехвалентные каузативные глаголы. Надо отметить, что из одновалентных первообразных переходных глаголов по дополнениям образовались и одновалентные, и двувалентные каузативные глаголы. Последние, помимо прямого дополнения, требуют еще одно косвенное дополнение. Из двувалентных первообразных переходных глаголов по дополнениям образовались и двувалентные, и трехвалентные каузативные глаголы. В этом случае некоторые каузативы по валентности к дополнениям остаются неизменными, а часть других каузативов преобразуется в трехвалентные. Трехвалентные каузативы, кроме прямого дополнения, требуют два косвенных дополнения. Из трехвалентных первообразных переходных глаголов по дополнениям образовались трехвалентные каузативные глаголы. В грабаре трехвалентные каузативы не составляют большого числа. И одновалентные, и трехвалентные каузативные глаголы образуют омонимичные пары со своими первообразными переходными глаголами.